ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հեղուկ քլորի ձեռքբերման, հեղուկ քլորի կոնտեյներների և բալոնների վնասազերծման, վերանորոգման, հաստաչափման, ավազաշիթահարման և ներկման ծառայությունների մատուցման N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01»
ընթացակարգի հրավերի կասեցման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 2-ի թիվ 15/01-01 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

Հեղուկ քլորի ձեռքբերման, հեղուկ քլորի կոնտեյներների և բալոնների վնասազերծման, վերանորոգման, հաստաչափման, ավազաշիթահարման և ներկման ծառայությունների մատուցման *ընթացակարգի ծածկագիրը՝* N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01»

Պատվիրատուն՝ ***«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն***, որը գտնվում է ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 հասցեում, ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01 ծածկագրով հայտարարված ՇՀ ընթացակարգի հրավերով անցկացվելիք մրցույթը հայտարարում է կասեցված և ստորև ներկայացնում է կասեցման պատճառն ու համառոտ նկարագրությունը:

Կասեցման պատճառ	Հրավերում ամրագրված գնման առարկայի տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին
Կասեցման հիմնավորում	Ներկայացված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի 4-րդ կետի պահանջներին, այն է գնման առարկայի մասնագրերում միաժամանակ ներառվել է թե ապրանքի, թե ծառայության միաժամանակյա ձեռքբերում: ՇՀԱՊՁԲ ընթացակարգով հարկ է իրականացնել միայն ապրանքի ձեռքբերում, իսկ ծառայության ձեռքբերումը՝ ՇՀԾՁԲ ընթացակարգով

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ *Հայկ Հովհաննիսյանին*:

Հեռախոս (055) 55-78-35

Էլ. փոստ՝ hho@armwater.am :

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*

Հ. Հովհաննիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Գնահատող հանձնաժողովի 15/01-01 որոշման/

«Հեղուկ քլորի ձեռքբերման, հեղուկ քլորի կոնտեյներների և բալոնների վնասազերծման, վերանորոգման, հաստաչափման, ավազաշիթահարման և ներկման ծառայությունների մատուցման
N **«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01»**
ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 02.02.2015թ.

Մասնակցում էին՝ Նախագահ՝ Ա.Մարտիրոսյան

Անդամներ՝ Դ. Գասպարյան, Կ. Անդրիասյան, Դ. Ադամյան, Ա. Մկրտչյան

Քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

1. Հանձնաժողովը քննարկեց և ընդունեց, որ «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01» ընթացակարգի հրավերում ամրագրված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին և տեխնիկական խնդիրների պատճառով www.gnumner.am կայքում հրապարակվել է ընթացակարգի նախնական (քննարկումային) տարբերակը, որն ըստ էության հաստատված չի եղել գնահատող հանձնաժողովի կողմից:
2. Հաշվի առնելով, որ ընթացակարգով նախատեսված հայտերի փաթեթների բացումը նախատեսված է փետրվարի 3-ին, **Հանձնաժողովը որոշեց.**

   2.1 Կասեցնել ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01 ծածկագրով հայտարարված ՇՀ ընթացակարգի հրավերով անցկացվելիք մրցույթը:

   2.2 Հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի 4-րդ կետի պահանջներին համահունչ գնման առարկայի բնութագիր պարունակող և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված փաթեթի հիման վրա նոր մրցույթի անցկացումը:

3. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները.**

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Արմեն Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ..... Դավիթ Գասպարյան

..... Կարեն Անդրիասյան

..... Դավիթ Ադամյան

..... Արթուր Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Հայկ Հովհաննիսյան